

## ՀԱՐՄԻԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ներկայ պատմական մոմենտում, երբ ընտրողական սկզբ-  
քունքը կարող է մեր կեանքի մէջ մեծ նշանակութիւն  
ստանալ, առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում Հարա-  
ւային Կովկասի<sup>1)</sup> երեք գլխաւոր ազգութիւնների՝ հայ, վրա-  
ցի, թիւրք, համեմատական թիւը։ Հիմք բոնելով 1897 թուա-  
կանի ժողովրդագրութիւնը և Կովկասի ստատիստիկ. Կոմիտե-  
տի առաջ բերած լրացումները («Կավկազ. Կալ» 1904 թ.) միայն  
Հարաւային Կովկասում հայերի թիւը կարելի է հաշուել այժմ  
1,300 հազար<sup>2)</sup> վրացիները, բոլոր ցեղերը միասին վերցըրած<sup>3)</sup>—  
համարեա նոյնքան։ Աւելի մեծ է թուավ թուրք-թաթարական  
տարրը, որ հաշում է 1,800 հազար։

Հարաւային Կովկասում, 1897 թուականի ժողովրդագրու-  
թեան համաձայն, ապրում էին 5,565,547 շունչ, որոնցից  
2,580,687 շունչ մահմեղական, մնացածը ամբողջովին քրիս-  
տոնեայ և չնչին քանակութեամբ (25,000) մովսիսական կրօ-  
նին պատկանող Ուրեմն, ոչ-մահմեղական տարրը հաւասար  
էր 2,984,860 հոգու. այսինքն աւելի քան մահմեղական տար-  
րը։ Եթէ մահմեղական տարրն էլ վերլուծենք ըստ ազգութիւնների, հիմք ընդուելով լեզուն, այն ժամանակ կը ստանանք հե-  
տեւեալը. մօտ 600 հազար լեզգիական ցեղեր, իրանց ծագու-  
մով հնդկա-եւրոպական ազգերին պատկանող. պարսիկներ մօտ  
50 հազ., թաթեր մօտ 65 հազ., թալիշներ մօտ 75 հազ. և  
քրդեր 150 հազ.. տարրեր են և աջարցիները, ինդիլոյցիները—  
մօտ 60 հազ., որոնք վիրական ծագում ունեն. Բոլոր յիշած

1) «Անդրկովկաս», յորջորջումը, միակողմանի է և անճիշտ Կովկասեան  
լեռնաշղթայից այս կողմ ապրողներս ի՞նչպէս մեզ համարենք «այն կողմ»  
կամ «անդր» գտնուողներ... Քանի որ գյուղական ունի ռէիւսիսային Կովկաս  
անունը—աւելի լաւ չէ գործածել և Հարաւային Կովկաս տերմինը։

2) Տես «Մոււճ» 1904 № 1.

3) Քարթուելի, իմերել մինզրել, գուրիացի, խևուր, փլաւ, թուշ  
ավանեթ, յաղ և այլն։

ցեղերը միայն կրօնով են կապուած թուրք-թաթարական տարրի հետ...

Ցիշած երեք գլխաւոր ազգութիւններից հայ տարրը նշաւոր թիւ է կազմում Երևանի, Գանձակի և մասամբ Թիֆլիսի նահանգներում. Վիրական տարրը գերակշռում է Բաթումի, Քութայիսի և մասամբ Թիֆլիսի նահանգներում, իսկ թուրք-թաթարական ցեղը ստուարաթիւ է Բագուի, Գանձակի և Երևանի նահանգներում. Այդպիսով հայ տարրը Թիֆլիսի նահանգում խան է վրացական մեծամասնութեան հետ, իսկ Երևանի և Գանձակի նահանգներում շրջապատուած է թուրք-թաթարական ազգաբնակութեամբ:

Սակայն այդ երեք նահանգներում կան մի քանի գաւառներ հայկական մեծամասնութեամբ. Այդպիսի գաւառների թիւը շատ չէ, միայն հինգ, այն է. Ալէքսանդրոպոլ, ուր հայերը կազմում են ամբողջ ազգաբնակութեան  $80^0/0$ -ը, Ախալքալաք— $70^0/0$ , Նոր-Բայազէթ— $67^0/0$ , Էջմիածին— $62^0/0$ -ը և Շուշի— $53^0/0$ -ը. Կէսից պակաս, թէև ոչ աննշան տոկոս են կազմում հայերը հետևեալ գաւառներում. Զանգեզուրի ( $45^0/0$ ), Երևանի ( $40^0/0$ ), Ղազախի ( $38^0/0$ ), Կաղզմանի ( $37^0/0$ ), Բորչալուի ( $35^0/0$ ), Կարսի ( $34^0/0$ ), Նախիջևանի ( $33^0/0$ ) և Սուրմալուի ( $30^0/0$ ) գաւառներում. Աննշան չեն թուով հայերը նաև Ախալցխայի ( $28^0/0$ ) և Շարուր-Դարալագեազի ( $28^0/0$ ) գաւառներում:

Հարաւային Կովկասի մնացած գաւառներում հայ տարրը, բաց առած Թիֆլիս և Բագու քաղաքները, ցիր ու ցան և նուազ թիւ է կազմում:

Հարաւային Կովկասի առաջադիմութեան տեսակէտից մը լիթարական է գէթ այն երևոյթը, որ կուլտուրապէս աւելի բարձր հայ-վրացական տարրը, միասին վերցրած, թուով պակաս չէ թուրք-թաթարական մասսայից, որի ցաւալի յետամնացութիւնը կարող է մեծամեծ խոչընդուներ յարուցանել մեր երկրի խաղաղ-կուլտուրական էվոլյուցիայի առաջ...